

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ CROSS-LINKING-Ը ՈՐՊԵՍ ՍԿՍՎՈՂ
ԿԵՐԱՏՈԿՈՆՈՒՄԻ ԲՈՒԺՄԱՆ, ԿԵՐԱՏՈԿՈՆՈՒՄՈՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԻՋԵՑՄԱՆ ՄԻՋՈՑ
(Նախնական արդյունքների ամփոփում)**

ՄԱԼԱՅԱՆ Ե.Ա., ՎԱՆՅԱՆ Լ.Մ.

Երևանի Ս.Վ.Մալայանի անվ. ակնաբուժական կենտրոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 12/02/2014 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

Երևանի Ս.Վ. Մալայանի անվ. ակնաբուժական կենտրոնի տվյալներով, կերատոկոնուսը Հայաստանի համար եզրային պաթոլոգիա է, հանդիսանում է երիտասարդ և աշխատունակ տարիքի անձանց հաշմանդամության բերող հիմնական պատճառներից մեկը:

Հաշմանդամների հանրապետական շտեմարանի տվյալներով (դեկտեմբեր 2011թ.ի տվյալներով), Հայաստանում կերատոկոնուսով պայմանավորված հաշմանդամների թիվը 279 է, որոնցից 18-ն՝ առաջին կարգի, 103-ը՝ երկրորդ կարգի, 155-ը երրորդ կարգի, որոնցից 3-ը՝ հաշմանդամ երեխա:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, աչքի հիվանդություններով պայմանավորված հաշմանդամների ընդհանուր թիվը Հայաստանում 12037 է, որոնց շրջանում կերատոկոնուսով պայմանավորված հաշմանդամները կազմում են 2,3%:

Cross-linking-ը եղջրենու կոլագենային ամրացման նոր եղանակ է, որի էությունը եղջրենու ստրոմայի կոլագենի մոլեկուլների միջև լայնակի կամ խաչվող կապերի առաջացումն է, դրանով իսկ՝ եղջրենու մեխանիկական ամրության բարձրացումը: Նախապես էպիթելազրկված եղջրենին 30 րոպեների ընթացքում ոռոգվում է ռիբոֆլավին -դեքստրան լուծույթով: Այնուհետև եղջրենու վրա ազդում են 365 նմ ալիքի երկարությամբ ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Միջամտությունը ցուցված է կերատոկոնուսի I, II, III-ի սկզբնական փուլերում, կայուն պղտորումների բացակայության դեպքում, պախիմետրիայի տվյալները 400 մկմ-ից բարձր են 12-50 տարեկան հասակում:

Հարկ է նշել, որ կերատոկոնուսը զարգացող հիվանդություն է և նույնիսկ նրա զարգացման կանխարգելումն արդեն մեծ նվաճում է:

Այսպիսով, Cross-linking-ը կերատոկոնուսի ժամանակակից կոնսերվատիվ բուժման միակ արդյունավետ միջոցն է: